«Թեքեյան Կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացված ծրագրեր՝ 2016 - 2018

Դեկտեմբեր, 2018թ.

- «Անվճար դասագրքեր 2018/2019» ծրագրի շրջանակում Երեւանի, Գյումրիի, Ստեփանավանի, Կարբի գյուղի եւ Բերձորի՝ Վ.Թեքեյանի անվան դպրոցների 182 անապահով աշակերտներին 2,060 դասագրքի տրամադրում:

Նոյեմբեր, 2018թ.

- Ֆինանսական օժանդակություն «Փրկություն» հաշմանդամ երեխաների կենտրոնին:
- Ֆինանսական օժանդակություն Երեւանի Ալ. Սպենդիարյանի անվան երաժշտական մասնագիտական դպրոցին:

Հոկտեմբեր, 2018թ.

- Եգիպտահայ արվեստագետ Ներսես Պիծակյանի անհատական ցուցահանդեսը Թեքեյան կենտրոնում:
- Ֆինանսական օժանդակություն արցախցի երաժիշտներին:
- «Հայ բանաստեղծության իշխան» Վահան Թեքեյանի ծննդյան 140-ամյակին նվիրված հանդիսություն:
- Մայրաքաղաքի հիմնադրման 2800-ամյակին նվիրված «Երեւանը երեւանցիների աչքերով» լուսանկարչական ցուցահանդեսը Թեքեյան կենտրոնում:

Սեպտեմբեր, 2018թ.

- «Այցելություն թանգարաններ եւ տեսարժան վայրեր» ճանաչողական ծրագրի շրջանակում այցելություն Երեւանի պատմության թանգարան, «Երեւանը երեւանցիների աչքերով» ցուցահանդեսի, կենդանաբանական այգի, ԼՂՀ Զոհված ազատամարտիկների հիշատակի թանգարան, Հունոտի կիրճ, Շուշիի Ղազանչեցոց եկեղեցի: Ծրագրի շահառուներ՝ 92 աշակերտներ Երեւանի, Գյումրիի, Ստեփանավանի, Կարբի գյուղի եւ Բերձորի՝ Վ.Թեքեյանի անվան դպրոցներից:

- Երեւանի հիմնադրման 2800-ամյակին նվիրված «Երեւանը երեւանցիների աչքերով» լուսանկարչական ցուցահանդեսը Երեւանի քաղաքապետարանում:

Օգոստոս, 2018թ.

- Ստամբուլահայ լուսանկարիչ Մուրատ Էզերի լուսանկարների անհատական ցուցահանդեսը Թեքեյան կենտրոնում:

- Վանեցի հայերի ավանդական տարազների լուսանկարների ցուցահանդեսը Թեքեյան կենտրոնում:

- «Ամառային ճամբար» ծրագրի իններորդ շրջան. Հայաստանի եւ Արցախի թեքեյանցի 69 շահառուի 8-օրյա հանգստի կազմակերպում եւ հովանավորում Հանքավանի «Արագած» ճամբարում:

Հուլիս, 2018թ.

- «Դիմանկար» խորագրով միջազգային լուսանկարչական ցուցահանդես:

Մայիս, 2018թ.

- «Թեքեյանական 8-րդ օլիմպիադա»՝ գիտելիքների մրցույթ մաթեմատիկա, անգլերեն լեզու, հայոց լեզու եւ գրականություն առարկաներից՝, ինչպես նաեւ ասմունքի մրցույթ՝ նվիրված մեծագույն արեւմտահայ բանաստեղծ Վահան Թեքեյանի ծննդյան 140-ամյակին: Ծրագրի մասնակիցներ՝ հայաստանցի, արցախցի եւ սիրիահայ 100 աշակերտներ: Մրցանակների սահմանում, մշակութային ձեռնարկ:

Փետրվար, 2018թ.

- «Photopodium.com - Մենք 10 տարեկան ենք» միջազգային լուսանկարչական ցուցահանդես:

- Ֆինանսական օժանդակություն «Փրկություն» հաշմանդամ երեխաների կենտրոնին:

Հունվար, 2018թ.

- Բերձորցի երիտասարդ նկարչուհի Անահիտ Ըռքոյանի անհատական ցուցահանդեսը՝ նվիրված Արցախյան շարժման 30-ամյակին:

Հունվար – դեկտեմբեր, 2018թ.

- Աջակցություն մի շարք հայաստանյան հասարակական, մշակութային, տեղեկատվական կազմակերպությունների, այդ թվում ՀԹՄՄ:

Նոյեմբեր, 2017թ.

- ՀՀ սփյուռքի նախարարության հետ համատեղ՝ արցախցի երիտասարդ նկարիչների «Վերածնունդ» ցուցահանդեսը Թբիլիսիի «Հայարտուն» կենտրոնում:

Հոկտեմբեր, 2017թ.

- «Անվճար դասագրքեր-2017/2018» ծրագրի շրջանակում Երեւանի, Գյումրիի, Ստեփանավանի, Կարբի գյուղի եւ Բերձորի՝ Վ.Թեքեյանի անվան դպրոցների 190 անապահով աշակերտներին 2,433 դասագրքի տրամադրում:

- Ֆինանսական օժանդակություն «Միրաք» պատանեկան-ուսանողական շարժմանը:

Սեպտեմբեր, 2017թ.

- «Մենք 10 տարեկան ենք» խորագրով լուսանկարչական ցուցահանդես՝ նվիրված PhotoPodium.com կայքի հիմնադրման 10-ամյակին:

- Ֆինանսական օժանդակություն Ալ.Սպենդիարյանի անվան երաժշտական մասնագիտական դպրոցին:

- ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ «Թեքեյան կենտրոն» հիմնադրամի «Արարատը հայի աչքերով» ցուցահանդեսը ներկայացվեց Չինաստանում եւ Կորեայի Հանրապետությունում:

Օգոստոս, 2017թ.

- «Ամառային ճամբար» ծրագրի ութերորդ շրջան. Հայաստանի եւ Արցախի թեքեյանցի 72 շահառուի 8-օրյա հանգստի կազմակերպում եւ հովանավորում Հանքավանի «Արագած» ճամբարում:

Հուլիս, 2017թ.

- Երեւանի Վ.Թեքեյանի անվան թիվ 92 հիմնական դպրոցում վերանորոգման աշխատանքների իրականացում:

- Լուսանկարչի միջազգային օրվան նվիրված «Լուսանկարչի օրագրից» խորագրով ցուցահանդես:

Հունիս, 2017թ.

- «Թանգարաններ եւ տեսարժան վայրեր» ճանաչողական ծրագրի շրջանակում այցելություն Երեւան քաղաքի եւ Սյունիքի մարզի պատմամշակութային վայրեր: Ծրագրի շահառուներ՝ 85 աշակերտներ Երեւանի, Գյումրիի, Ստեփանավանի, Կարբի գյուղի եւ Բերձորի՝ Վ.Թեքեյանի անվան դպրոցներից:

Մայիս, 2017թ.

- ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ «Թեքեյան Կենտրոն» հիմնադրամի «Արարատը հայի աչքերով» խորագրով լուսանկարչական ցուցահանդեսը ներկայացվեց Տոկիոյում:

Ապրիլ, 2017թ.

- Ֆինանսական օժանդակություն «Միրաք» պատանեկան-ուսանողական շարժմանը:

- Արցախցի գեղանկարիչների եւ քանդակագործների՝ ապրիլյան հերոսների հիշատակին նվիրված «Ազատությունն այլընտրանք չունի. անկախություն» խորագրով ցուցահանդեսը Երեւան քաղաքի պատմության թանգարանում:

- Գիտելիքների մրցույթ մաթեմատիկա, անգլերեն լեզու, հայոց լեզու եւ գրականություն առարկաներից՝ «Թեքեյանական 7-րդ օլիմպիադա», հայաստանցի, արցախցի եւ սիրիահայ 80 աշակերտների մասնակցությամբ: Մրցանակների սահմանում, այցելություն Պատանի հանդիսատեսի թատրոն, մշակութային ձեռնարկ:

- Ֆինանսական օժանդակություն երեք զինվորականների՝ Լոնդոնում մասնակցելու Հայոց բանակի կազմավորման եւ Շուշիի ազատագրման 25-ամյակին նվիրված մշակութային ձեռնարկին:

Հունվար, 2017թ.

- Մոսկվաբնակ հայ նեյրովիրաբույժ, ջրասուզակ եւ լուսանկարիչ Սերգեյ Գասպարյանի հեղինակած «Ստորջրյա աշխարհի գաղտնիքները» լուսանկարչական ցուցահանդեսը Երեւանում՝ Թեքեյան Կենտրոնում:

Հունվար – դեկտեմբեր, 2017թ.

- Աջակցություն մի շարք հայաստանյան հասարակական, մշակութային, տեղեկատվական կազմակերպությունների, այդ թվում ՀԹՄՄ:

Դեկտեմբեր, 2016թ.

- Ֆինանսական օժանդակություն Գյումրիի Լորդ Բայրոնի անվան թիվ 20 դպրոցին:

- Արցախցի արվեստագետների «Ազատությունն այլընտրանք չունի. անկախություն» խորագրով գեղանկարչական ցուցահանդեսը Թեքեյան Կենտրոնում:

Նոյեմբեր, 2016թ.

- Ֆինանսական օժանդակություն Երեւանի Վ.Թեքեյանի անվան թիվ 92 դպրոցին:

- Լուսանկարիչ Արմեն Ենգոյանի «Առաջնագծում» ցուցահանդեսը Շուշիի արվեստի կենտրոնում:

Հոկտեմբեր, 2016թ.

- Ֆինանսական օժանդակություն Կարբիի Վ.Թեքեյանի անվան միջնակարգ դպրոցին տանիքի վերանորոգման համար:

- «Անվճար դասագրքեր-2016/2017» ծրագրի շրջանակում Երեւանի, Գյումրիի, Ստեփանավանի եւ Կարբի գյուղի՝ Վ.Թեքեյանի անվան դպրոցների 156 անապահով աշակերտներին 2,407 դասագրքի տրամադրում:

- Ամերիկահայ լուսանկարիչներ Թեդ Անդրեասյանի եւ Նունե Քարամյանի հեղինակած «Հարաշարժ լույս» խորագրով ցուցահանդեսը:

- Ֆինանսական օժանդակություն «Փրկություն» հաշմանդամ երեխաների կենտրոնին:

Սեպտեմբեր, 2016թ.

- «Արարատը հայի աչքերով» լուսանկարչական ցուցահանդեսը Շուշիի արվեստի կենտրոնում:

- Կարբիի Վ.Թեքեյանի անվան դպրոցի տանիքի վերանորոգում:

- Արմեն Ենգոյանի հեղինակած «Առաջնագծում» խորագրով լուսանկարչական ցուցահանդեսը Երեւանում:

Օգոստոս, 2016թ.

- «Ամառային ճամբար» ծրագրի յոթերորդ շրջան. Հայաստանի եւ Արցախի թեքեյանցի 76 շահառուի 8-օրյա հանգստի կազմակերպում եւ հովանավորում Հանքավանի «Արագած» ճամբարում:

Հունիս, 2016թ.

- Ֆինանսական օժանդակություն Ապրիլյան քառօրյա պատերազմում վիրավորում ստացած զինծառայողներին:

- «Թանգարաններ եւ տեսարժան վայրեր» ճանաչողական ծրագրի շրջանակում այցելություն Վ. Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարան, Ամբերդ ամրոց-բերդաքաղաք եւ եկեղեցի, Տաթեւի վանական համալիր: Ծրագրի շահառուներ՝ 90 աշակերտներ Երեւանի, Գյումրիի, Ստեփանավանի, Կարբի գյուղի եւ Բերձորի՝ Վ.Թեքեյանի անվան դպրոցներից:

Մայիս, 2016թ.

- «Արարատը հայի աչքերով» լուսանկարչական ցուցահանդես:

- Ֆինանսական օժանդակություն Գյումրիի Լորդ Բայրոնի անվան թիվ 20 դպրոցին:

Ապրիլ, 2016թ.

- Գիտելիքների մրցույթ մաթեմատիկա, անգլերեն լեզու, հայոց լեզու եւ գրականություն առարկաներից՝ «Թեքեյանական 6-րդ օլիմպիադա», հայաստանցի եւ սիրիահայ 85 աշակերտների մասնակցությամբ: Մրցանակների սահմանում, այցելություն Պատանի հանդիսատեսի թատրոն, մշակութային ձեռնարկ:

Փետրվար, 2016թ.

- «Կապույտ երկնքի տակ» խորագրով միջազգային լուսանկարչական ցուցահանդես:

Հունվար – դեկտեմբեր, 2016թ.

- Աջակցություն մի շարք հայաստանյան հասարակական, մշակութային, տեղեկատվական կազմակերպությունների, այդ թվում ՀԹՄՄ: